

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

396

U-38





596  
Մ-40

0 12 0 - 10

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

№ 2

Պոլեմարհե բոլոր յերկրների, միացե՛ք!

# ՄԱՐՏԻ 8-Ը 1925 Թ.



300  
1728-44

**ԿԼԱՐԱ ՅԵՏԿԻՆ**

Հ. Կ. Կ. Կ. Կ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե Ե Ր Ե Վ Թ Կ  
1925

396 *uv*

U-57

ԲԱՆՎՈՐՈՒՅԻՆ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

№ 2

Պարեպարեք բոլոր յեկեցեցի միացե՛ք!

300  
1798-44



47

ՄԱՐՏԻ 8-Ը 1925 Թ.

1925  
48581

Հ. Կ. Կ. Կ. Կ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1925

396 *uv*

U-57

ԲԱՆԿՈՐՈՒՇՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՇՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

№ 2

Պարբերակներ բոլոր յեկրների միացեմ!

300  
1728-44



47

**ՄԱՐՏԻ 8-Ը 1925 Թ.**

1003  
12584

Հ. Կ. Կ. Կ. Կ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Գ Ը Ն

1925

26 JUN 2013

006  
11-8231

ՏՐԵՍԻ ԱՌՁԻՆ ՏՊՐԱՆ

Գառ. 2824

Գրառ. 1874

Տիրած 1000

ՖԼՈՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՇԻՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԻՆ  
ՅԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՏՈՆԸ ՅԵՎ  
ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Մարտի 8-ին, միջազգային կոմունիստական այս տոնի օրն, աշխարհիս բոլոր ծայրերում, կարմիր դրոշակների տակ բարձրանում են հաղարավոր, միլիոնավոր կին աշխատավորներ. նրանք հեղեղի նման թափվում են սերտորեն ձուլված յերկաթե շարքերով մեծ քաղաքների ծայրամասերը, հարուստների լայն ու լուսավոր փողոցները, նրանք դուրս են գալիս մարտի 8-ին վոչ իբրև խղճուկ ճնշվածներ, վորոնց հատուկ է միայն տանջվել ու համբերել, այլ դուրս են գալիս այդ պրոլետարական տոնի օրն իբրև բողոքողներ, իբրև կոփոզ մարտիկներ, ցուցադրելու համաշխարհային բուրժուազիայի առաջ իրենց ուժը և իրենց հեղափոխական կամքը:

Մարտի 8-ի տոնը սահմանվեց 1910 թ. կլարա Յետուկինի առաջարկությամբ կին սոցիալիստների 2-րդ կոնֆերանսում, վորը տեղի ունեցավ կոպենհագեն քաղաքում, իբրև մի միջոց հետամնաց բանվորուհիների գիտակցությունը բարձրացնելու համար: Այդ շրջանում բանվորուհիները դուրկ եյին միանգամայն դասակարգային գիտակցությունից և ընկնում եյին բուրժուական կանանց ֆեմինիստական շարժման ազդեցության տակ, վորոնք կեղծ պաշտպաններն եյին հանդիսանում բանվորուհիներին: Յերկարատև տարիների վորձը, համոզեց, վոր իսկապես մարտի 8 ն ամենալավ ազիտ սցիոն միջոցն է կինաշխատավոր ժասանների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու և նրանց մեջ հեղափոխական կամք կոփելու համար: Ամեն տարի նոր ու նոր միլիոններ յերկար ու ձիգ շարքերով գալիս, համախմբվում եյին մարտի 8-ի դրոշակի տակ, գիտակցելով, վոր միմիայն

հեղափոխական ճանապարհով, բանվոր դասակարգի հետ միասին, աշխատավոր կիներ պիտի փնտրե իր ազատագրումը. այս գիտակցութիւնը քանի գնում, ավելի խորանում ու բարձրանում եւ Աշխարհիս բոլոր ծայրերում, սկսած ճագատամիտ ու քաղաքակիրթ» արեւմտյան յերկրներէից մինչև արևելքի խոր սնկյուններն այսօր՝ մարտի 8-ին միլիոնավոր աշխատավորուհիների շրթունքներից պիտի հնչե. — «Կեցցե Խորհրդային իշխանութիւնը՝ միակ ազատարարն աշխատավոր կնոջ»։ Այսօր՝ մարտի 8-ին թե արևմտյան և թե արևելյան յերկրներում միլիոնավոր աշխատավորուհիներ կանգնած կարմիր դրոշակի տակ, իրենց աչքերը հռել են դեպի հեռավոր հյուսիսը, վորտեղից առաջին անգամ հնչեց ազատութեան ձայնը հոգուս ճնշված աշխատավորուհու և վորտեղից աշխատավորուհու մութ ու խավար կյանքի մեջ առաջին անգամ ընկավ ազատութեանն ավետող լուսավոր ճառագայթը։

Այս 15 տարվա ընթացքում, զանազան յերկրներում աշխատավոր կանայք, մարտի 8-ին գուրս են յեկել, զանազան լողունգներով, նայած քաղաքական մոմենտին, բայց այդ բոլոր իրենց առաջադրած պահանջներն ունեցել են մի ընդհանուր միտք ու նպատակ՝ բարեփոխել տնտեսագիտ աշխատավոր կնոջ վիճակը, լայնացնել նրա իրավունքները, բարձրացնել աշխատավոր կնոջ դասակարգային գիտակցութիւնը, պատրաստել նրանից հեղափոխական զինվոր, կոչ անել նրան դեպի կռիւ, կոմունիզմի վեհ գաղափարի համար։

Այսօր մարտի 8-ին, բոլոր յերկրների բանվորուհիներն ու գեղջկուհիները պիտի գուրս գան ալ կարմիր դրոշակներով, վորոնց վրա պիտի գրված լինեն Իլլիչի պատգամները. պատգամներ, վորոնք պետք է բաց անեն աշխատավորուհու առաջ վերջնական ազատագրման ճանապարհը։

ՄԱՐՏԻ 8-Ը ԽՈՐՀՐ ԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ինտերնացիոնալի գեղեցիկ ու հարազատ հնչյունների տակ բազմաթիւ միտինգներում, ժողովներում, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում, գեղջկուհու անկյուններում, հանդիսավոր կերպով պիտի տոնեն Խորհրդային Միութեան բանվոր գեղջկուհիները, բատրակ կանայք իրենց ամուսինների, իրենց կոմսոմոլ զավակների, պիտերների հետ իրենց նվիրական հաղթական տոնը մարտի 8-ին։

Խորհրդային բոլոր յերկրներում, աշխատավորուհիներ թոթափել է իր վրայից դարավոր ստրկութեան շղթաները։ Պրոլետարիատի զիկտատուրան սահմանել է լիակատար ու հավասար իրավունքներ կնոջ և տղամարդու համար։ «Բոյլշևիկյան խորհրդային հեղափոխութիւնը արմատից կտրում է ճնշման, անհավասարութեան հետքերը այնպես խորը, վոր աշխարհիս յերեսին և վոչ մի կուսակցութիւն, և վոչ մի հեղափոխութիւն չի համարձակվել այդ անել», — ասում է ընկ. Լենինը։

Պրոլետարիատի զիկտատուրան լայն բաց է արել աշխատավոր կնոջ առաջ բոլոր խորհրդային, պրոֆեսիոնալ, կոպերատիվ հիմնարկութիւնները և հրա վիրում է կնոջը մասնակցել վոչ միայն յերկրի շինարարութեան, այլ և յերկրի կառավարութեան. «ամեն մի խոհարարուհի պիտի սովորի յերկիրը կառավարել» — ասում է ընկ. Լենինը և ավելացնում է — «կնոջ ազատագրման գործը իրենց կանանց գործն է»։ Խ. իշխանութիւնը մշակել է մի շարք դեկրետներ, որենքներ, վորոնք պաշտպանում են կնոջ աշխատանքը ամենալայն իմաստով։ Մայրութեան և մանկութեան պաշտպանութիւնը ինչպես և հասարակական հիմնարկների՝ մսուրների, մանկական պարտեզների, հասարակական ճաշարանների և այլ նույնանման կնոջն ա-

զատագրող հաստատութիւնները կազմակերպութիւնները Սորհրդային իշխանութիւնը համարում է իր ամենահիմնական պարտականութիւններից մեկը: Այս հիմնարկութիւններն են այն քարերը, աղույսները, վորոնք անհրաժեշտ են կոմունիզմի կառուցման համար: Ամեն մի աշխատավորուհի պիտի գիտակցե, վոր միակ արգելքը կյանքի մեջ իրականացնելու այս գեղեցիկ ծրագրները՝ մեր անտեսական գրութիւնն է. վորպեսզի մեր յերկրի անտեսական գրութիւնը բարձրանա՝ անհրաժեշտ է, վոր մեր յերկրի բանվորն ու գյուղացին ձեռք-ձեռքի տված դուրս գան իբրև յեռանդուն գիտակից շինարարներ ու միասին իրենց աշխատանքով հարստացնեն ու ճոխացնեն մեր յերկիրը: Նրանք են տեր ու տիրական ու պատասխանատու մեր յերկրին: Բանվորուհին և գեղջկուհին պիտի գիտակցեն, վոր յերկրի անտեսութեան բարձրացնելը կապված է կնոջ ազատագրման խնդրի հետ:

Այս գիտակցութիւնը պիտի ստիպե բանվորուհուն և գեղջկուհուն վարել իր ամբողջ ուշադրութիւնը, թափել յեռանդը և աշխատանքը, բաղխել ու մտնել բոլոր հասարակական հիմնարկների դռները, մասնակցել յերկրի շինարարական գործին, ու այդպիսով արագացնել նոր կյանքի կառուցումը: Սորհրդային յերկրների աշխատավորուհու Մարտի 8-ի իր միջազգային տոնի օրը, իբրև հիմնական լոգունգ պիտի ցուցադրե հետեյալը. — «բանվորուհիներ և գեղջկուհիներ, հիշեցեք ձեր մեծ ուսուցչի ու բարեկամի՝ Իլիչի ավանդները, մտեք ընկ. Լենինի կուսակցութիւնը, սեղմեցեք ձեր շարքերը Սորհրդային իշխանութեան շուրջը, մասնակցեք յերկրի շինարարութեան, արագացրեք կոմունիզմի մտտեցումը»:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՄԻ ՅԵՎ ՍԱՐՏԻ 8-Ը**

Հայաստանի աշխատավորուհին շնորհիվ պատմական, սոցիալական և տնտեսական պայմանների, շատ հետ է քննացել թե մտավորապես և թե քաղաքականապես: Յարական կառավարութիւնը աշխատել է նրան պահել մութի ու խավարի մեջ, խեղդել նրան իր նահապետական ստրկացնող սովորութիւնների, նախապաշարմունքների մեջ: Իաշնակցական կառավարութիւնը վոչնչով չփոխեց նրա գրութիւնը, այլ ընդհակառակը՝ ավելի թշվառացրել է նրան: Շնորհիվ մի շարք կոտորածների, յեղբայրասպան պատերազմների, վորոնց յեթէ չստանք հեղինակը, գոնե գլխավոր պատճառը յեղել է Իաշնակցութիւնը, հայ աշխատավորուհու աչքից, տարիներ շարունակ, չի ցամաքել արտասուքը:

Ս. իշխանութեան ամենագլխավոր նպատակն է բարձրացնել, բաշել գեպի շինարարութիւնը, մասնակից անել քաղաքականութեան, հրավիրել գեպի նոր կյանք, ամենաճշդված հետամնաց մաստաները:

Ս. իշխանութիւնը հայ աշխատավորուհու կյանքի պատմութեան մեջ բացեց մի նոր եջ: Կոմ. Կուսակցութիւնը Հայաստանի խորհրդայնացումի գրեթե առաջին օրից, սկսեց իր առանձին ասպարատները՝ այն է կին-բաժինների միջոցով տանել հատուկ աշխատանք բանվորուհու և գեղջկուհու լայն մաստաների մեջ: Կին-բաժինների նպատակն է բարձրացնել հայ աշխատավորուհու մտավոր մակարդակը, զարգացնել նրան կուլտուրապես և քաղաքականապես, արթնացնել նրա գասակարգային գիտակցութիւնը:

Այս աշխատանքները վերջին տարվա ընթացքում բավական մեծ ծավալ են ստացել և ավելի խորն են թափանցել: Բայց պետք է նկատել, վոր Հայաստանում կան շատ խուլ անկյուններ, մութ ու խավար գյուղեր, վորտեղ գեղջկուհին, չնայած Սորհրդային իշխանութեան նրան տված լայն իրավունքներին, շարունակում է տա-

ուսպել նահապետական սովորութիւնների, մութի ու խավարի ճանկերի մեջ:

Վորպեսզի հնարավոր լինի կռվել այդ բոլորի դեմ, անհրաժեշտ է, վոր ինքը Հայաստանի աշխատավորուհին ցույց տա մեծ ինքնագործունեութիւն, գիտակցե իբ վիճակը:

Հայաստանի աշխատավորուհի, դու գանձում ես կիսա- ձորտական վիճակի մեջ, դու հավասար տնդամ չես համար- վում նույն իսկ օտ ընտանիքի մեջ, դու ծածկում ես քո քիթը և յերեսը, ամաչում ես խոսել քո տան մեծերի հետ, փակ- ված ես քո տան չորս պատերի մեջ, կտրված գրսի աշ- խարհից, դու ստրուկ ես. քո ոջախի, քո որսորցի, քո տգիտութեան շնորհիվ զրկում ես ուսումից քո զավակ- ներին, մանավանդ աղջիկներին, վորոնց չես ուղարկում դպրոց, արգելում ես նրանց մանել պիտանքների (պատկոմա- կան) շարքերը, վորտեղ նա փոքր հասակից պիտի պատ- րաստվի նոր կյանքի համար, վոր քեզ նման խեղճ ու կրակ չը լինի այս աշխարհիս վրա: Հայաստանի աշխա- տավորուհի, գարթիր, սթափվիր, ճանաչիր քո բոլոր իրա- վունքներն ու պարտականութիւնները, վերացրու առու- ջին հերթին քո միջից անգրագիտութիւնը, ձեռք բեր զանազան գիտելիքներ, սովորիր զանազան արհեստներ, բարձրացրու քո աշխատանքի վորակը. վորքան շատ լինի քո գիտութիւնը, վորքան բարձր լինի քո աշխատանքը, այնքան հեշտ կլինի բարեկամել քո տնտեսական վիճա- կը, հարստացնել քո յերկիրը: Խ. Իշխանութիւնը բաց է արել լիկկայաններ, խրճիթ. ընթերցարաններ, ակումբներ, գեղջկուհու անկյուններ, ամեն տեսակի հիմնարկներ, վո- ընք պիտի զարկ տան քո մտավոր ու քաղաքական զար- գացման. գնա մտիք բոլոր այդ բաց դռները. Մար- տի 8-ի առնին հայտարարիր կռիվ քո բոլոր թշնամի- ների դեմ, այսինքն մթութեան, խավարի ու բոլոր նա- խապաշարմունքների դեմ:

Հայաստանի գիտակից աշխատավորուհիներ և ուսուց- շուհիներ, ձեզ վրա դրված է խոշոր պարտականութիւն՝ ուղեկցել ու առաջ տանել ձեր հետամնաց քույրերին:

Գիտակից բանվորուհիներ և գեղջկուհիներ, մտեք Իլլիչի կուսակցութեան մեջ, սեղմեցեք ձեր շարքերը Խորհրդային Իշխանութեան շուրջը:

Վտաի յելեք դեպի կռիվ, դեպի հաղթանակ, Հայաս- տանի աշխատավորուհիներ, այսօր՝ Մարտի 8-ին միաց- րեք ձեր ձայնը խորհրդային յերկրների աշխատավորու- հիներին, հրավեր կարգացեք արևմուտքի կապիտալի ծանր լծի տակ տանջվող ձեր քույրերին, ձեռք տվեք արևելքի ստրկուհի քույրերին, գոչեցեք նրանց բոլորին կոմունիստական Ինտերնացիոնալի կարմիր դրոշի տակ: Կոմունիստական Ինտերնացիոնալն է, վոր պիտի տանի ամբողջ աշխատավորական մարդկութիւնը դեպի վերջնա- կան ազատագրում: Ձեզ են կանչում Իլլիչի պատգամնե- րը, վտաքի յելեք մատաղ աղջիկներ, պատրաստվեցեք բռնել ձեր հին մարտիկների տեղը: Ձեր միջազգային որը տանում է ձեզ դեպի կոմունեայի լուսավոր կյանքը:

ԿԵՅՅԵ Մարտի 8-ը՝ միջազգային կոմունիստա- կան որը բանվորուհու և գեղջկուհու:

ԿԵՅՅԵՆ համաշխարհային բանվորուհիները և գեղջկուհիները:

ԿԵՅՅԵ Հայաստանի գիտակից աշխատավորուհին:

ԿԵՅՅԵ Լենինի գմի կարմիր դրոշը:

### ՄԱՐՏԻ 8-Ի ՏՈՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐ- ԿՐՆԵՐՈՒՄ

Բոլոր կապիտալիստական յերկրներում, ինչպես Գեր- մանիայում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, Իտալիայում և այլ յերկրներում թագավորում է դեռ ևս կապիտալը, իշխում է բուրժուազիայի դիկտատուրան: Կապիտալը շարունակում է իր արշավանքը բանվոր դասակարգի դեմ,

բուրժուազիան քաղցածները բերաններից խլում է նրանց վերջին հացի կտորը: Զարգացել են յերկու ծայրահեղություններ՝ մի կողմից ճոխություն, հարստություն, մյուս կողմից ծայրահեղ չքավորություն, քաղց ու ծարավ: Քաղցը այս յերկրներում առաջ է յեկել վոչ իբրև տարերային աղետ, ինչպես Ռուսաստանում 1921-1922 թվերին, այլ նա հետևանք է այն լպիրը քաղաքականության, վոր տանում է բուրժուազիան. այստեղ քաղցը վաղաժամ գերեզման է իջեցնում հազարավոր աշխատավորներին, կանանց և յերեխաներին: Այս յերկրներում ամբողջ ներքին ու արտաքին քաղաքականությունը տարվում է այն ուղղությամբ, վոր, վորքան կարելի յե, այնքան շատ հարստահարեց աշխատավորին, ճնշել շունեվորին, ծծել ու քամել աշխատավոր կնոջ արյունն ու քրտինքը: Այս կապիտալիստական յերկրներում, վոտնակոխ է արված հեղափոխության արյան գնով ձեռք բերված պրոլետարական նվաճումները: Ինչպես 8 ժամյա աշխատանք, վորոշված աշխատավոր: Այստեղ կապիտալիստները շնորհիվ իրենց անտեսական ուժի, պետական ձանապարհով վոչնչացրել են բոլոր այն որենքները, վորոնք պաշտպանում էին աշխատավոր կնոջ շահերը, և նրանց փոխարեն հրատարակել նոր որենքներ, վորոնց շնորհիվ կարելի կը լինի ավելի ուժեղ կերպով շահագործել կնոջ աշխատանքը: Ինչ վերաբերում է կնոջ հավասարության, այս ուղղությամբ և վոչ մի քայլ չի արվում, Փրանսիայում, Իտալիայում, Բելգիայում կինը մինչև այժմ զրկված է ընդհանուր հավասար ձայնատվությունից. կան կապիտալիստական յերկրներ, վորտեղ այդ իրավունքները վերապահված են վորոշ հարուստ կանանց, ինչպես Անգլիայում. նույն տեսակի սահմանված ձայնատվություն անցկացնելու արամադիր են մի շարք այլ յերկրներ՝ ինչպիս Իտալիան: Ծնշվածների միակ պաշտպանը այս յերկրներում, այն է կոմունիստական կուսակցությունը, կոմունիստները յենթարկված են ամենատու-

կալի հալածանքների ու վայրագությունների: Գտնվելով բուրժուազիայի յերկաթե կրունկի տակ, կապիտալիստական յերկրների աշխատավորուհիները Մարտի 8-ին պիտի դուրս գան զանազան տնտեսական պահանջներով. ինչպես սոցիալական ապահովության, կնոջ աշխատանքի պաշտպանության, ընդհանուր ձայնատվության իրավունք և սրանման իրենց տեղական պահանջներից բղխած լոզունգներով: Այս պահանջների հետ միասին, Մարտի 8-ին, կապիտալիստական յերկրների աշխատավորուհիները պիտի դուրս գան մի շարք լոզունգներով, վորոնցով պիտի հայանաբերեն իրենց հեղափոխական կամքը: Հոկտեմբերյան մեծ բոցի կայծերը չեյին կարող շտարածվել աշխարհիս հեռավոր անկյունները: Այսոր՝ Մարտի 8-ին արևմուտքի բանվորուհիները, ընդհանուր պրոլետարիատի հետ միասին պիտի գոչեն «կեցցե Սորճդային իշխանությունը», «կեցցե պրոլետարական դիկտատուրան», «կոչի սպիտակ տերորը», «կեցցե 3-րդ Ինտերնացիոնալը»: Այսոր Մարտի 8-ին, կապիտալիստական յերկրների աշխատավորուհիները պիտի վողջունեն կենինգրադի բանվորուհիներին և գեղջկուհիներին, վորոնք 7 տարի սրանից առաջ, Մարտի 8-ին իրենց ամուսինների, յեղբայրների ու զավակների հետ միասին կռիվ սկսեցին ցարի ու բուրժուազիայի դեմ, և ապա, նույն թվի Հոկտեմբերին բարձրացրին իշխանության կարմիր դրոշմ:

### ՄԱՐՏԻ 8-Ը ԱՐԵՎԵԼՅԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ռուսաստանի պրոլետարական մուրճի հուժկու հարվածները, արձագանք են գտել նաև Հեռավոր Արևելքում: Արևելյան տանջված, հարստահարված աշխատավորությունը այսոր վտաքի յե կանգնել թե իր յերկրի ու ստար յերկրների կապիտալիստների դեմ, վորոնք հարստահարում

կեղեքում են իրենց յերկիրը: Արևելյան յերկրներն ազգային ազատագրման շարժման մեջ արևելքի կինը սկսել է ցույց տալ իր վորոշ մասնակցութիւնը: Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում և այլ արևելյան յերկրներում հազարավոր աշխատավոր կանայք գործադուլների ժամանակ ոգնող են հանդիսանում բանվոր դասակարգին և յեռանդով մասնակցում են բանվորական բոլոր շարժումների մեջ: Բայց չպետք է մոռանալ այն հանգամանքը, վոր այդ յերկրներում կանանց ճնշող մեծամասնութունը գտնվում է կրկնակի ու յեռակի ստրկութիւն մեջ. նա ստրուկ է թե բնատանիքում և թե հասարակութիւն մեջ: Կինը արևելյան յերկրներում դեռ չի ճանաչված իբրև ինքնուրույն եյակ. նա համարվում է իր ամուսնու սեփականութիւն, վորը կարող է գնել ու ծախել նրան ինչպես մի իր: Նա զուրկ է ամեն տեսակ քաղաքացիական ու մարդկային իրավունքներից: Շնորհիվ դարավոր կրոնական նախապաշարմունքների — սովորույթների ու ավանդների՝ նա մինչև այժմ ստիպված է ծածկել իր դեմքը և իրավունք չունի նայելու նույնիսկ արևի փայլուն ճառագայթներին. այս նախապաշարմունքները, սովորութիւններն ու ավանդները դարերի ընթացքում խոր ազդեցութիւն են թողել նրա մտածողութիւն վրա և առաջ են բերել նրա մեջ ստրկական հոգի. այնքան խորն է այդ ազդեցութիւնը, վոր նույն իսկ սովետական արևելքում, ուր կինը ստացել է ամեն իրավունքներ, բայց դեռ նա շարունակում է մնալ ստրուկ ու դառնալ առարկա ծախելու և գնելու: Արևելյան այս դարավոր ստրկուհին, Մարտի 8-ի միջազգային տոնի ուրը, պիտի բարձր և հուժկու բարձրացնի իր բողոքի ձայնը, կալիմի (վաճառքի), չազրի և բոլոր կրոնական նախապաշարմունքների և ավանդների դեմ: Այս պիտի լինի հիմնական յոգունգը արևելքի կնոջ:

## ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԿԱՊԻ ԽԸՆԴ- ՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀՈՒ ԴԵՐԸ

Մեզ մոտ՝ Հայաստանում 4 տարի, իսկ Ռուսաստանում 7 տարուց ավելի յե, վոր իշխանութիւնն անցել է բանվորների և գյուղացիների ձեռքը: Բայց վոչ վոր չպիտի մոռանա, վոր դա ձեռք չի բերվել հեշտութիւն: Քրսան և հինգ տարուց ավելի, Ռուսաստանի բանվորները պայքարել են այդ նպատակի համար, շատերը աքսորվել Սիբիր, մահացել բանտերում կամ կախաղանների վրա, շատ-շատերը 1905 թվի հեղափոխութիւն և կամ գործադուլների ժամանակ սպանվել փողոցներում, կովի գիրքերի վրա:

Դժվար եր և 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխութիւն սկզբի տարիները: Բանվորներն ու գյուղացիները դեռ պետութիւն կառավարելու մեջ անփորձ էյին, իսկ յերկրի տնտեսութիւնը քայքայված, բանվորն ու բանակը սոված և վոչ մի տեղից ել ոգնութիւն չէյին ստանում: Այս բոլորի հետ, Խորհրդային իշխանութիւն դեմ կռվում էյին հին՝ ցարական պաշտոնյաները, սփիցերները, գեներալները, քաղաքներում ապրող հարուստ և ուսում առած մարդիկ, գյուղում տերտերն ու կուլակը:

Ամենից վատը նա եր, վոր մեր այս բոլոր թշնամիներին հացով, գներով և փողով ոգնում էին Յեվրոպայի բուրժուական պետութիւնները:

Խորհրդային իշխանութիւնը, համեմատած իր թշնամիների ուժերի հետ՝ թեև շատ թույլ եր, բայց շնորհիվ բանվորների և գյուղացիների կազմակերպվածութիւն և միացյալ ուժերին՝ նրանք կարողացան հաղթող դուրս գալ այդ կռվում: Մեր արտաքին թշնամիները հուսա-

հատվեցին ու ասացին «Խորհրդային իշխանութիւնը գեն-  
քի ուժով հաղթել չի կարելի, պետք է նրան տնտեսա-  
կան պաշարման յենթարկել, չթողնել վոր խորհրդային  
յերկրներին վոչ վոք ոգնութիւն ցույց տա, և արդար-  
տով սովածութիւնից նրանք անձնատուր կը լինեն»:

Քաղաքացիական կռիւները վերջացան, եւ չէր լը-  
վում հրացանի և թնդանոթի ձայնը: Բանվորն ու գյուղա-  
ցին սկսեցին իրենց շինարար աշխատանքը, բայց այս  
անգամ սկսվեց տնտեսական կռիւլը:

Այս կռիւն ավելի յեր գժվար, քան գենքով կռիւլը:  
Վորովհետև յերբ իշխանութիւնը բանվորների և գյուղա-  
ցիների ձեռքն անցավ, յերկրում ամեն ինչ քայքայվել էր  
ու քանդվել:

Պատերազմի և քաղաքացիական կռիւ ընթացքում,  
Ֆարբիկաներն ու զավոդները գադարել էին աշխատե-  
լուց, վոչնչացել էր գյուղացիների տնտեսութիւնը, քա-  
րածուխ և նավթ չէր ստացվում, իսկ յերկաթուղին գրե-  
թէ չէր գործում:

Այսպիսի գժվարին պայմաններում, բանվորները և  
գյուղացիներն ունենալով հեղափոխական վճռականու-  
թիւն, իրենց հաղթանակի վրա հավատք և յերկաթե  
կամք, նրանք մի կողմից կռվեցին, մյուս կողմից աշ-  
խատեցին բարձրացնել յերկրի տնտեսութիւնը:

Հարկավոր էր զավոդներում աշխատող բանվորներին,  
ֆրոնտում կռիւող կարմիր բանակայինին և պետական  
ծառայողներին կերակրել, հարկավոր էր գյուղացուն ոգ-  
նել իր ավերված տնտեսութիւնը վերականգնելու:

Հիմա բացի կռիւից, վոր չկա, սյուս խնդիրները մը-  
նում են նույնը: Հարկավոր է, վոր գյուղացուն ոգնենք:  
Հակառակ դեպքում այդ ոգնութիւնը գյուղի հարուստից  
և կուլակից ստանալով, չքավոր և միջակ գյուղացին  
կընկնեն նրանց ազդեցութիւն տակ:

Յեթե բանվորը չաշխատի գյուղատնտեսութիւն

բարձրացման համար, յեթե նա չոգնի գյուղացուն, վոչ  
միայն գյուղացին կընկնի կուլակի ազդեցութիւն տակ,  
այլ և բանվորը հնարավորութիւն չի ունենա այսպիսի  
գյուղացիական յերկրում, քաղաքի ֆարբիկն ու զավոդը  
շարժման մեջ գնել: Իսկ առանց զավոդի ու ֆարբիկի  
չենք կարող վոչ լրիվ ազատագրվել բուրժուաների լծից  
և վոչ էլ կարող ենք կոմունիստական կարգեր ստեղծել:

Առանց գյուղատնտեսութիւն զարգացման, առանց  
գյուղացիութիւն ակտիվ մասնակցութիւն, բանվորը մե-  
նակ այսպիսի պայմաններում, չի կարող այդ բոլորը ի-  
րագործել:

Հեղափոխութիւն ծանր և գժվար որբին ինչպես  
գյուղացին էր, վոր ոգնեց բանվորին գենքով և հացով,  
հիմա տնտեսական այս կռիւում գյուղացին, նույնպես իր  
շահի տեսակետից ոգնութիւն պետք է հասնի բանվորին:

Հարց է ծագում, հապալինչպես է ոգնելու գյուղացին:

Խորհրդային իշխանութիւնը գյուղում ունի կոոպե-  
րատիվ խանութներ՝ շարչիների դեմ կռվելու, գյուղա-  
տնտեսական կոոպերատիւներ,՝ ռանչպարին ոգնելու, փո-  
խողկոմներ՝ փոխանակ չըսվոր գյուղացին նեղ ժամանակ  
կուլակներից ոգնութիւն խնդրելու, փոխողկոմների մի-  
ջոցով նրանց ոգնելու, խրճիթ-ընթերցարաններ՝ գյուղա-  
ցուն տերտերների և հմայիլ բաց անողների գիտութիւն-  
նեց ազատելու և իսկական ուսում տալու, գրագետ դարձ-  
նելու համար:

Գյուղում ունենք նաև խորհուրդներ, վորպեսզի ա-  
ռաջվա նման գյուղը մի մարդ չկառավարի, այլ գյուղի  
կողմից ընտրված և ընտրողների առաջ պատասխանատու  
խորհուրդը՝ վորոնք պետք է լինեն չըսվոր և միջակ  
գյուղացիներ:

Ահա այս բոլորը, վորոնց միջոցով մեր իշխանու-  
թիւնը ուղում է տնտեսական այս գժվարին կռիւից հաղ-

Թող դուրս գա: Իսկ մենք կը հաղթենք այն ժամանակ, յերբ գյուղացին փոխանակ մասնավոր առևտրականից ապրանք վերցնելու, կանգամագրվի իր գյուղի կամ շրջանի կոպերատիվին, կը կազմակերպվի իր փոխօգկոմիտեի, խրճիթ-ընթերցարանների և գյուղխորհուրդների շուրջը, կուժեղացնի նրանց: Յերբ մեր գյուղացին զրագետ կը դառնա, կուժեղացնի իր փոխօգկոմը և կոպերատիվը, յերբ գյուղացիութունը խորհուրդների միջոցով կառավարել սովորի, այդ բոլորից հետո մեր գյուղատնտեսութունը կը բարձրանա, գյուղացին կը հարստանա, հետևաբար նա ոգնության կը հասնի մեր քաղաքների զավոդներին և ֆաբրիկաներին:

Քաղաքի և գյուղի կապը պիտի ստեղծվի այն ժամանակ, յերբ բանվորը ոգնի գյուղացուն, իսկ գյուղացին բանվորին ու գնա նրա ցույց տված ճանապարհով:

Անա այս քաղաքի և գյուղի կապի խնդրում աշխատավոր գեղջկուհին մեծ անելիքներ ունի:

Խորհր. իշխանությունը կանանց և տղամարդկանց միջև կատարյալ հավասարություն հաստատելով, կնոջ համար ստեղծվել են բոլոր հասարակական գործերում ակտիվ աշխատելու հնարավորություններ:

Պետք է ոգտագործել բոլոր միջոցները: Աշխատավոր գեղջկուհին առանց քաշվելու պետք է մտնի գյուղխորհուրդների, փոխօգկոմիտեի մեջ և տղամարդու հետ հավասար յերկիրը կառավարել սովորի: Գյուղացի կինը պետք է ակտիվ մասնակցի գյուղական կոպերատիվներին, աշխատի կոպերատիվ խանութներում, ուր նրանք հաճախ ավելի բարեխիղճ են աշխատում քան տղամարդիկ: Գեղջկուհին պետք է կազմակերպվի պատգամավորական ժողովների մեջ, վերացնի իր անգրագիտությունը, վորովհետև առանց զրագետ դառնալու այդ բոլոր աշխատանքները չի կարելի կատարել:



Քաղաքի և գյուղի կապը, բանվորը, գյուղացիության միությունը ընդգեմ բուժ. և արհեստ. ընկ. Լենինի ավան լներից մեկն է, վոր մեզ թողել է: Ամեն մի աշխատավորուն հի այդ կապի և միության մեջ տեսնելով իր ազատագրումը Խորհրդային իշխանության հաղթանակը, պետք է վոր կատարեն ընկ. Լենինի ավանդները: Պետք է կազմակերպված դուրս գան, իրեց մասնակցությունը բերելու բանվոր զատակարգի վարած այս դեմքին կռիւն, վորից կախված է Խորհրդային իշխանության լինել կամ չլինելու հարցը:

Կարո Համդիլյան

ԿՆՆԱՆՑ ԵՄԲՈՒՄԸ ԱՐԵՎԵԼ ՔՈՒՄ 1)

1008  
19284

Արեւելքում - Տաճկաստանում, Պարսկաստանում, Յեգիպտոսում, Չինաստանում և ամեն տեղ, ուր դեռևս իշխում են կալվածատերերն ու կապիտալիստները, ուր դեռ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի կապիտալիստները նստած են արևելքի բազմամիլիոն աշխատավորության մեջքին և ծծում են նրանց արյունն ու աշխատանքի պտուղները, այնտեղ բանվորունն ու գեղջկուհին արհամարհված են, ճշմարտ. ստրուկ ու գերի յես թե ընտանիքում, թե պետության և թե հասարակության առաջ: Աշխարհը դեռ ևս բանտ է նրանց համար ու իրենք անխնայում գերի յեն նրա մեջ:

Մակայն Հոկտեմբերյան կայծերը չեյն կարող չհասնել ստրուկներից ստրուկին, արևելքի աշխատավորունն: Հոկտեմբերյան կայծերն արդեն փառել են նրա մեջ ազատագրման տենչը: Նա արդեն արթնացել է իր դարավոր բնից, ստրկությունից, նա ուզում է դեն շարքը:

1) Հոգվածը կազմելիս ոգտագործվել է ընկ. Վարիա Գասպարյանի «Կանանց շարժումը արևելքում» զրբույկը: Վ. Տ.

տել նահապետական ընտանիքի բարացած կենցաղը, կրոնական մոլորեցնող հավատալիքները և դառնալ մառախողամարդուն հավասար ընկեր, թե իրավունքներով և թե պարտականութուններով:

Այս ապացուցում են վերջին տարիներս արևելքում սկսված կանանց շարժումները: Այդ շարժումներին մասնակցում են վոչ միայն Տաճկաստանի, Յեզիտուսի, Չինաստանի, Կորեայի և ուրիշ յերկրների ուսում առած, հարուստ դասակարգի կանայք, այլ ավելի ակտիվ ու վճռական մասնակցում են բանվորուհիներն, աշխատավորուհիներն ու գեղջկուհիները: Մենք նրանց տեսնում ենք թե աշխատանքի պայմանները բարելավելու համար կազմակերպված գործադուլավոր բանվորների շարքերում, թե բողոքի ցույցերում և թե փողոցային բաց կոնվուլսիոնում, վորոնք ուղղված են յեվրոպական կապիտալի դեմ:

Այստեղ կծանոթացնենք Հայաստանի աշխատավորուհուն արևելքի մի շարք յերկրների կանանց շարժումներին հետ: Կանգ կառնենք նաև, թե աշխատավորուհին ինչ պայմաններումն է աշխատում արդյունաբերության մեջ:

**ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ**

Տաճկաստանում կնոջ աշխատանքի շահագործումը սկսված է 1908 թվին, յերբ տաճիկ նոր զարգացող բուրժուազիան հեղափոխության ճանապարհով վորոշ իրավունքներ ձեռք բերեց յերկրի կառավարությանը մասնակցելու համար: Այդ թվականից հողագործական Տաճկաստանում սկսվում է կառաց-կամաց զարգանալ գործարանային արդյունաբերությունը: Նոր բացվող մանվածային, ծխախոտի, մետաքսի գործարաններում և ջուլահականոցներում արդեն աշխատում են կանայք: Որական 12 ժամ ամենաձանր պայմաններում աշխատելով նրանք շատ չնչին են վարձատրվում, 1—4 պիաստր (մեկ պիաստրը ութը կոպեկ է):

Չնայած, վոր հետագա տարիներում կանանց թիվը քանի գնում ավելանում է, իսկ նրանց աշխատանքն էլ ավելի շահագործվում, սակայն մինչև 1914 թիվը, բանվոր կանանց մեջ չի նկատվում վոչ մի շարժում: 1914 թվի համաշխարհային պատերազմից հետո պատկերը փոխվում է:

Տաճկաստանում, ինչպես և ամեն տեղ, պատերազմը և նրան հետևող տնտեսական քայքայումը վոչ միայն քաղաքի աշխատավորուհուն, այլ և գեղջկուհուն ստիպում են թողնել ընտանեկան փակված կյանքը, յերեխաները և գնալ արդյունաբերական քաղաքներն ինքնուրույն աշխատելու և ապրուստի միջոցներ ձարելու: Այսպիսով մենք նրանց տեսնում ենք Անատոլիայի և Կոստանդնուպոլսի շրջանի ջուլահականոցներում, գորգի արհեստանոցներում, Ձմրուռնիայի շրջանի մրգեր չորացնող գործարաններում, Բոուսայի սետաքսի արհեստանոցներում և այլն: Միայն Անատոլիայում 5—6 հազար բանվորուհիներ կան: Բացի դրանից հազարավոր կանայք աշխատում են «կարմիր կիսալուսին» կոչվող ընկերության արհեստանոցներում, հարյուրավոր կանայք աշխատում են ծխախոտի ֆաբրիկաներում: Ներկայումս Տաճկաստանի բանվոր կանայք կազմում են բանվ ընկերի ընդհանուր թվի քսան տոկոսը, այսինքն հարյուր բանվորներից քսանը կին են: Թեև տաճիկ կինն արդեն աշխատում է յերկրի նոր զարգացող տնտեսական կյանքի վերաշինման գործին, բայց նա գեռ ևս քաղաքական վոչ սի իրավունք չի ստացել: Թեև նա տան չորս պատերից դուրս է յեկել, սակայն գեռ իրավունք չի ստացել շաղրից ազատվելու:

Տաճիկ կինը ակտիվ մասնակցում է վերջին տարիները սկսած ազգային հեղափոխությանը, վորը ուղղված է յեվրոպական բուրժուազիայի տիրապետության դեմ: Մասնակցելով ազգային ազատագրական պայքարին, նա միաժամանակ իր քաղաքական իրավունքի խնդիրն է

բարձրացնում, պահանջում ե չազրի վերացումը և այլ կրոնական սովորութիւններ, վորոնք նրան միայն ստորկացնում են:

Տաճկաստանում նոր զարգացող Կոմիտենիստական Կուսակցութիւնը աշխատանք ե տանում նաև կանանց շրջանում, դեկավարելով ընկ. Լենինի ավանդներով՝ վոր յուրաքանչյուր բանվորական դասակարգային պայքար հաղթութեամբ չի վերջանա, յետե աշխատավոր կանայք չեն մասնակցում այդ կովին:

**Յ Ե Գ Ի Գ Տ Ո Ս Ո Ւ Մ**

Յեզիպոսի խոշոր արդյունաբերութեան—շաքարի, բամբակի, ծխախոտի գործարաններում մեծ թվով կանայք են աշխատում: Բանվորուհիների թիվն ավելի մեծ ե արդյունագործական և տնայնագործական մանր արդյունաբերութեան մեջ:

Այստեղ ես գործում ե անգլիական կապիտալը, վորը բարեգործութեան ու կուլտուրա մտցնելու անվան տակ կրկնակի ու յիսակի շահագործում ե կնոջ վարձու աշխատանքը:

Բեզովին բանվորուհիները որական աշխատում են 12 ժամից վոչ պակաս և ստանում են 5—6 պիաստր, մինչդեռ նույն աշխատանքի համար տղամարդիկ ստանում են 10—12 պիաստր: Լնգլիացիք շատ ճարպիկ կերպով շահագործում են նաև թափառաշրջիկ բեզովին կանանց աշխատանքը, նրանք գիտեն շատ գեղեցիկ գորգեր, կապերաներ, վերմակներ գործել, սփռոցներ և ուրիշ ձեռագործներ նախշել: Անգլիացիք շատ եժան գնով աշխատեցնում են չորս հարյուրից ավելի բեզովինուհիների իրենց արհեստանոցներում և ահագին ոգուտներ են ստանում նրանց գեղեցիկ ձեռագործներից:

Յեզիպոսում կանանց շարժումը սկսվել ե դեռ ևս քսան տարի առաջ, բայց մինչև 1919 թիվը այդ շարժ-

մանը մասնակցել են միայն Յեզիպոսի բուրժուաների կանայք: 1919—1920 թվին, յերբ Յեզիպոսի Անգլիայի դեմ ուղղված ազգային ազատագրական շարժումներն ուժեղանում են, այդ շարժմանն արդեն մասնակցում են պրոլետար կանանց մասսաները: Մենք նրանց տեսնում ենք գործադուլային ցույցերում, ուր շատ անգամ բանվորուհիներն ավելի շատ զոհ են գնում քան բանվորները: Տեսնում եք տղամարդկաց հետ միասին փողոցներում դիրքեր փորելիս և այդ դիրքերում կովելիս: Կանիբե քաղաքի փողոցներում սովորական բան ե դարձել կին ագիտատորներին հանդիպելը. շատ հաճախ կազմակերպվում ե կանանց ցույցեր՝ «Կորչի Անգլիան» լոզունգներով: Այդ շարժումներին մասնակցում են նաև գեղջկուհիները, վորոնք ոգնում են իրենց ամուսիններին քանդելու հեռագրաթելերը, յերկաթուղագծերը, վորտեղով պետք ե անցնեն անգլիական զինվորներով լի զնացքները:

Ի հարկե, դեռ ևս այդ շարժումները զուտ դասակարգային չեն: Յեզիպոսի բուրժուազիան, վորն ուկում ե իր ազգային արդյունաբերութիւնն ու կուլտուրան զարգացնել, ազատվլ Անգլիայի Փաբլիկաններից՝ ոգտագործում ե կանանց այդ շարժումները: Բայց հեռու չե այն որը, վոր Յեզիպոսի աշխատավորուհին միացած յերկրի բանվորութեան հետ միասին իր զենքերը կուղղի ազգային բուրժուազիայի դեմ՝ լիակատար ազատագրելու համար:

**Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ**

Չինաստանում զլխավորապես զարգացած ե մետաքսի և մանվածալին արդյունաբերութիւնը, ուր աշխատում են ավելի շատ գյուղերից յեկած ալջիկներ ու կանայք, քան թե տղամարդիկ: Այստեղ պրոլետար բանվորուհիները 400,000-ից ավելի յեն հաշվվում. բացի դրանից կան նաև տնայնագործներ, տնային ծառայողներ և

հույապակաս բատրակուհիներ: Բանվորուհիների մեծ տոկոսը կազմում են բատրակուհիները:

Բանվորուհիների աշխատանքի պայմանները, վոր շրջանն էլ, վոր վերցնես, շատ ծանր են, խիստ շահագործվում են, վարձատրվում են տղամարդկանցից 60—70 տոկոսով պակաս և ամբողջովին կախում ունեն գործարանատերերից: Գործարանում բանվորուհին կատարյալ արուկ է: Ապրում է գործարանին կից առանձնացած հանրակացարաններում, որական աշխատում են 14 - 15 ժամ և իրավունք չունեն առանց կառավարչի թույլտվության հանրակացարանից դուրս գալու: Բացի վերոհիշյալ բնահանուր ծանր պայմաններից, բանվորուհիները յենթակա յեն գործարանատերերի կողմից մշտական հալածանքի ու ծաղրանքի: Այստեղ մեջ կը բերենք տեղի ունեցող բազմաթիվ դեպքերից մեկը. վորը պարզ ցույց կտա, թե գործարանատիրոջ համար գրոշի արժեք չունեն հարյուր հազարավոր աշխատավորուհիների կյանքերը: 1924 թ. փետրվարին Շանխայ քաղաքի մանվածային գործարանում հրդեհ է պատահում, գործարանի վարչութունը վախենալով գողութուններից՝ գործարանի դռները բաց չի անում և 200-ից ավելի բանվորուհիներ փակված մնալով հանրակացարաններում, կենդանի այրվում են:

Չինացի բանվորուհիները դեռ ևս չեն կազմակերպված պրոֆսիութունների մեջ, սակայն նյանք սկսել են գործադուլներ կազմակերպելով կովել թե սեղացի և թե յեվրոպական կապիտալիստանրի դեմ՝ իրենց դրությունը թեթեւօցնելու համար: 1922 թ. կազմակերպվել է 50 ից ավել գործարաններում 14 գործադուլ, ուր մասնակցել են 30,000-ից ավելի բանվորուհիներ, այդ գործադուլներից հինգը վերջացիլ են հաղթությամբ, իսկ ինը պարտությամբ, ձերբակալվել են և բանտ են տարվել գործադուլի ղեկավար բանվորուհիները: 1923 թ. կազմակերպ-

վել է յոթը գործադուլ՝ մասնակցությամբ 11,000 բանվորուհիներ:

Ներկայումս Չինաստանի կոմունիստական կուսակցությունը ուժեղ աշխատանք է տանում մեծ բազաքներում կենտրոնացած բանվորուհիների մեջ: Արդեն Չինաստանի բանվորուհիներն ավելի կազմակերպված են դուրս գալիս պայքարի կապիտալիստների դեմ, պահանջելով 8 ժամյա բանվորական օր, աշխատավարձի հավելում, աշխատանքի և մայրության պաշտպանություն և այլն: Չինաստանի բանվորուհիների կազմակերպված այս պայքարը ապահովված է, քանի վոր նրա ղեկավարը կոմունիստական կուսակցությունն է:

**Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն Ո Ւ Մ**

Հնդկաստանի հարստությունները շահագործում են անգլիական կապիտալիստները: Իեռ ևս 1911 թ. այնտեղ հաշվում եր 6 միլիոնից ավելի բանվորուհիներ: 1920 թ. Մադրաս և մյուս քաղաքներում կային շ.777 մանվածային գործարաններ: Իհարկե, այստեղ բանվորուհիների թիվը մի քանի անգամ ավելացել են: Հնդիկ բանվորուհու աշխատավարձը յերկու և յերեք անգամ պակաս է տղամարդու աշխատավարձից: Աշխատում են որական 11 ժամ և ավել:

Ավիլի դժբխտ է հնդկուհու կյանքն ընտանիքում: Որենքով նա փակված կյանք է վարում, տղամարդկանց առաջ յերեսը ծածկում: Նույն որենքով հնդկուհին այրիանալու դեպքում իրավունք չունի յերկրորդ անգամ ամուսնանալու: Մի՛չև որս պահպանվում է աղջիկներին շատ շուտ՝ 5 տարեկանից ամուսնացնելու սովորությունը: Այսպես 1911 թ. վիճակագրությունը պարզում է, վոր 5 տարեկան ամուսնացած կանանց թիվը հասնում եր 32.452-ի, իսկ այրիները 17.703 ի: Իսկ 5—10 ը տարեկան ամուսնացած կանայք յեղել են 2.213.778:

Հնդկաստանի կանանց շարժումները սկսվում են 1918 — 19 թ.: Սկզբում այդ շարժումները դեկադարում էլին Հնդկաստանի ազգային-հեղափոխականների կանայք, փորի պատճառով ել բանվորուհիների պայքարը դասակարգային շեր:

19 8 թ. Հնդկաստանի մանկեղան կանանց կոնֆե-րենցիան կոչ է նրատարակում բազմակնու թյան դեմ:

1921 թ. ազգային ազատության շարժումները հաջողության համար բանվորուհիների և գեղջիկուհիների մեջ ուժեղ ազդեցության սկսվում: Նույն թվին հրավիրվում է Հնդկաստանի կանանց խորհրդակցութուն, ուր մասնակցում են 600 ներկայացուցիչներ:

Կանայք մեծ շարժումով մասնակցում են նաև ընդհանուր բանվորական գործադուլներին: Կանանց ձեռք-կալությունները դառնում են այժման սովորական և մասսայական, վոր հնդկական կառավարութունը 20.500 ո. է հատկացնում կանանց նամար բան ո շինելու համար:

Հնդկաստանի ազգային-հեղափոխական և բանվորական շարժումների հետ ուժեղանում են նաև աշխատավոր կանանց շարժումները: Նրանք արդեն բռնել են դասակարգային ուղի, փորն ուղղված է թե տեղային և թե անգլիական բուրժուազայի տիրապետության դեմ:

Չինաստանի բանվոր դասը բռնել է պայքարի ուղի դանապարձը, ուրեմն նրա հաղթութունն էլ ապահովված է:

Ձ Ց.

### ՄԱՐՏԻ 8-Ի ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

#### 1. ԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՈՒ ՇԱՄԱՐ Ե ԿԱԶՄԱԿԵՐՄԱՍԾ «ԿԱՆԱՆՑ ՈՐԸ»

«Կանանց հարցով», կամ ուրիշ խոսքով կանանց քաղաքական իրավունք տալու խնդրով զբաղվել են շատ բուրժուական և մանր մեղչանական կուսակցություններ և ամենքն էլ իրենց տեսակետներով են մտայնել այս հարցին: Կանանց հարցի մասսայական շարժումն առաջ է բերում բուրժուական ֆեմինիստ կանանց շարժում, վորոնց նպատակն էր քաղաքական իրավունք ստանալը և ահա այս ֆեմինիստակաները - բուրժուական սիվիլայի աշխատում են ամեն կերպ բանվորուհիներին և իրենց կողմը քաշել՝ քարոզելով, վոր կանանց շահերը միևնույն են տղամարդկանց դեմ պայքար մղելու և հավասարություն ձեռք բերելու համար: Բուրժուական ֆեմինիզմի ազդեցության տակ՝ մի քանի յերկրների բանվորուհիների շարժումը թուլանում է և կրո մ է այդ շարժումը մի տեսակ հավասարություն ձեռք բերելու մի պայքար: Մակայն բանվորուհիների ավելի գիտակից մասը՝ հասկանում էր, վոր սիվիլ բանվորական շարժումն ուժեղացման, սոցիալիզմի ձգտելու պայքարում բանվորուհիներն կր հասնի իր լիակատար ազատագրման: Այս ուղղությամբ ամենից շատ աշխատել է հայանի կին կոմունիստ կարա Յետկիր՝ բանվոր դասի ջերմ պաշտպանը:

1909—1910 թվականներին կապիտալիստական յերկրներում աշխատող բանվորուհիների թիվը բավական շատացել էր, բայց նրա՝ ք գտնվում էլին սարսափելի դրության մեջ: Յեվ ահա սոցիալիստ բանվորուհիների կոնֆերանսը Իրանիայի Կապենհագեն քաղաքում՝ 1910 թ. վորոշեց, վոր բանվորուհու աշխատավորձի խնդիրը, աշխատավոր կնոջ ընտրական իրավունքը, աշխատանքի ապահովագրության և աշխատանքի վարձատրության հավա-

սարությունը, ձեռք կարող են բերել միայն հեղափոխական կոմի նախապարհով. այսինքն միայն սոցիալիզմին հասնելու դեպքում բանվորուհին կազասագովի իր դատավոր նորությունից լիվ ցանջաններէց: Յեզահա այս վորս ման վորպես նշան նետագա պայքարի և նվաճւմների համար. կարա Յեակինի առաջարկութեամբ կոնֆերանսը վորոշում է մարտի 19-ը հայտարարել միջազգային բանվորուհիների որ, և վոր միևնույն ժամանակ բոլոր յերկրների բանվորուհիները տոնեն այդ որը: Միջազգային բանվորուհիների որը ընտրել էին մարտի 19-ը այն պատճառով, վոր 1848 թ. այդ որը Պրուսիոյի բանվոր-բանվորուհիները զինված դուրս են գալիս իրենց թագավորի դեմ և պահանջում են բանվորուհիներին քաղաքական իրավունքներ տալ. սակայն, ինչպես այդ ընդունված է արյունարբու թագավորների կողմից, Պրուսիայի բուրժուազիան, հանձինս իր թագավորի, խեղդում է այդ ապստամբութիւնը և կոտորում է մի շարք բանվորուհիներ: Բայց հետագայում վորոշեցին միջազգային բանվորուհիներին որը տոնել մարտի 8-ին: Առաջին անգամ 1911 թ. այս որը տոնեցին Ամերիկայի բանվորուհիները, և ապա նեագհետե սկսեցին տոնել նաև մյուս բուրժուական յերկրների բանվորուհիները:

Այդ որը բոլոր մեծ ու փոքր քաղաքներում, բանվորուհիները կարմիր դրոշակներով կազմակերպում էին շքերթներ. բանվորուհիները յերկար ու ամուր շարքերով, հպարտութեամբ, ուրախ հեղափոխական յերգերով և լողունգներով գոչում էին— «Եցցե միջազգային բանվորուհու համաբախարիւնը սոցիալիզմի պայքարում ու այսպիսով գրավում էին բուրժուազիայի ուշադրութիւնը: Մարտի 8-ի որվա միտինգները, շքերթները, լրագրները զրավում էին ամենահեռ ընկած բանվորուհիներին: «Մա մեր որն է, սա մեր սունն է»—ասում էին նրանք ուրախութեամբ ու շտապում մասնակցելու ժողով-

ներին, միտինգներին: Առանձնապես յով տոնվեց այդ որը Գերմանիայում և Աւստրիայից: Բանվորուհիներն որվա առթիվ լույս էին ընծայել մի հանդես— «Կնոջ ընտրական իրավունքը և կանանց որը» վերնագրով: Բոլոր քաղաքներում և գյուղերում կազմակերպվել էին ժողովներ և միտինգներ. այդ որը բոլոր դահլիճները լցված էին բանվորուհիներով. տղամարդիկ նստում էին տանը յերեսաներին պահելու, իսկ իրենց կանանց ուղարկում ժողովներին:

Աւստրիայում մարտի 8-ի որը, շքերթի ժամանակ, վորին մասնակցում էին յերեսուն հազար բանվորուհիներ՝ վոստիկանութիւնը փորձում է խլելու նրանց ձեռքից կարմիր դրոշակները, բայց բանվորուհիները քաջաբար դիմադրում են: Սոցիալիստ-դեպուտատները միջամտում են և ընդհարումը վերջանում է արյունահեղութեամբ:

Չնայած բուրժուական պետութիւնները մինչ որսե, ընդառաջ չեն զնացել բանվորուհիների պահանջներին, բայց և այնպես, մարտի 8-ի միջազգային բանվորուհիների այդ տոնին մեծ ազիտացիա յեն անում. բուրժուական յերկրների բանվորուհիները այդ որը կոմմունիստական-Ինտերնացիոնալի ղեկավարութեամբ պայքարում են կապիտալիստ բուրժուաների դեմ:

#### «ԿԱՆԱՆՑ ՈՐԸ» ՌՌԻՍՍՍԱՆ ՌՌՍ

Ռուսաստանի ղիտակից բանվորուհիները առաջին անգամ 1913 թ., ցարական բեակցիայի այդ ժխորին, դուրս են գալիս փողոցները տոնելու Մարտի 8-ի որը և իրենց բողոքի ձայնը նշեցնելու ցարական միլիտարիզմին: Բեակցիայի այդ սև ուրերին դժվար եր Ռուսաստանում կազմակերպել միտինգներ ու շքերթներ. բանվորուհիները կարողացան միայն այդ որվա բանվորական «Պրավդա» և «Լուչ» թերթերում հիշատակել որվա մասին,

Թերթում տեղափոխել էին բանվորուհիների շարժման հերոսների լուսանկարները և Կլարա Յետկինի շնորհափորական հեռագիրը. բացի դրանից, կուսակցական ընկերները Լենինգրադի Կաշաշենկյան բիրժալում «գիտական յերեկո» անվան տակ կազմակերպել էին Մարտի 8-ի որվա առթիվ «Մոսկով միսիևիզ» զանգիճը 1946-ից երբ բանվոր բանվորուհիներով. խոսում էին կուսակցական ընկերներ. «ժածուկ միտինգը» վերջանալու մոտ՝ վրա յե հասնում ցարական փոստիկանուլթյունը և ձերբակալում և խոսողներից մի քանիսին:

Չնայած որվա տոնն անցավ անհաջող, բայց և այնպես Մարտի 8-ի տոնը անագին նշանակութուն ունեցավ համայն աշխարհի բանվորության համար. միջազգային բանվորությունը համոզվեց, վոր Ռուսաստանը արքնանում և, վոր ցարակալսի բանեերը չեն կարող մեղցնել բանվորի ու բանվորուհու բողոքն ու պայքարը:

1914 թ. Ռուսաստանում Մարտի 8-ը տոնվեց ավելի կազմակերպված. բանվորական թեթերը նվիրված էին Մարտի 8-ի տոնին, քաղաքագետը բանվորուհիներին գիտավորյալ թույլ եր տվել տոնի առթիվ կազմակերպել միտինգներ, ժողովներ, այլ և հրատարակել ամսաթերթ՝ նվիրված բանվորուհիներին միջազգային տոնին. սակայն տոնի նախորդակին ցարական կառավարությունը ձերբակալում և խմբազրական կողեղիակին. միայն կուսակցական ընկերները մի հատուկ համար են լույս ընծայում որվա առթիվ. մի բանի շրջաններում միայն կազմակերպում են ժողովներ, բացատրում են տոնի նշանակութունը, չի հաջողվում կազմակերպելու միտինգներ և շքերթ. փոստիկանությունը մեջ և բնկնում և «նագայկաներով» ցրում խմբվածներին՝ իսկ Մարտի 8-ի տոնը կազմակերպող բանվորուհիներին շատերին բանտ են նստեցնում և Սիբիր ուղարկում:

1914 թվին վրա յե հասնում համաշխարհային պատերազմը, ու այսպիսով 1915-1916 թվականներին միջազգային բանվորուհու որը Ռուսաստանում չի տոնվում բանվոր դասի դավաճան սոցիալիստ համաձայնողականները արբեցած ազգայնական տենդենցներով՝ բորբորում են համաշխարհային պատերազմը, հագորավոր բանվորներ և գյուղացիներ մորթում էին պատերազմի դաշտում, խղվում և միջազգային բանվորության համերաշխությունը:

Սակայն շուտով բարձրանում և մեծ փոփոխի. վրա յե հասնում 1917 թվի, բայց լինիների կոչով Ռուսաստանի բանվորուհիները Մարտի 8-ին, հին տոմարով փետրվարի 23-ին հեղափոխական բալերգով դուրս են գալիս փողոցները իրենց բողոքի ձայնը հնչեցնելու ցարական կառավարությանը: Լենինգրադի փողոցներից լսվում են հազարավոր բանվորուհիների և թշվառ կանանց կոչեր — բող կուչի պատերազմը, հաց սվեխ մե սով սծ լեեխաներին վեարաբերեք պատերազմը դուսեղ մե տմուխիներին ու յեղարքներին: Սովածությունից ու պատերազմի կոշմարից տանջված բանվորուհիների մասուն միաձայն, կուռ շարքերով գրոհ են տալիս դեպի ցարական պալատը, վորտեղ բազմած եր արյունարբու նիկոլայը. Լենինգրադի բանվորուհիների ժաստայական ցույցերին միանում են նաև հագորավոր բանվորներ և գինվորներ. ցարական փոստիկանության համար անսպասելի յե յինում ապստամբությունը և նա չի կարողանում դիմադրել և այսպես, բանվորներն ու բանվորուհիները ինդհանուր ուժերով զշում են թագավորին և քար ու քանդ առում բնդ-միշտ նրա թագն ու պալատը: Ցեվ այսպիսով 1917 թ. Մարտի 8-ը վոչ միտն միջազգային սոն Լե, այլվ դուրծավ ցարի սպառնամն մի պատմական ուր: Այդ ուր Ռուսաստանի հեղափոխակ սն կանուխ բարձուցրին ուրուե-սարխաթի հեղափոխական ջանք յեվ հանգցրին համաշխարհ-

հային հրդեհը, Փետրվարյան հեղափոխությունը սկիզբն  
եր Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության: Ռուսաստանի  
բանվորուհին փողոցացուական կռիվներում առաջին  
դիրհերումն եր' կուրծքը դեմ սված բանվորի հետ  
միասին՝ պաշտպանում եր Խորհրդային իշխանությունը:

### ՄԱՐՏԻ 8-Ի ՈՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Այն ժամանակ, յերբ Ռուսաստանի բանվորուհին ազատագրված հին կոշմարից, մասնակցում եր նոր կյանքի շինարարության ու ամրացնում Խորհրդային իշխանությունը, Այրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բանվորուհին ու գեղջկուհին դեռևս տնջում էյին մենշևիկ-մուսավաթիստ դաշնակների լծի տակ:

Անդրկովկասի աշխատավորուհու մեծ մասը չգիտեր մարտի 8-ի տոնի մասին: Բայց հեղափոխական ալիքների տարածվում են, կարծիր դողալը բարձրանում են ևս Այրբեջանի, Հայաստանի և Վրաստանի վրա: Առաջին անգամ մարտի 8-ի որը տոնում են Այրբեջանի բանվորուհին ու գեղջկուհին Բագվի փողոցները այդ որը լցվում են զանազան ազգությունների հազարավոր բանվորուհիներով: Կոշմարից ազատագրված բանվորուհիները կոչ են անում Հայաստանի և Վրաստանի բանվորուհուն և գեղջկուհուն ևս բարձրացնելու ազատության դրոշակը: այդ որը քաղաքի բոլոր շրջաններում և գավառներում կազմակերպվում են միախնայներ, ժողովներ դասախոսություններ: մուսուլման կանանցից շատեր այդ որը դեն են գցում իրենց չադրները, Բագվում 250 բանվորուհու համար բացվում ե անգրագիտության վերացման դպրոց: հիմք ե դրվում անգործ և անապաստան կանանց համար հանրակացարան բանալու շենքի:

1921 թվին Խորհրդայնացումից յերկու շաբաթ հետո՝ Թիֆլիսի բանվորուհիները նույնպես տոնեցին մար-

տի 8 ը. պակասներով, հեղափոխական յերգերով բանվորուհիները անցնում են զլիսավոր փողոցներով և հավաքվում Ալեքսանդրյան այգին: յեղբայրական գերեզմանատանը կազմակերպում են միախնայ. միախնային բանվորուհիներից մեկը վրացերեն լեզվով ասում ե— «միայն այսոր մենք զգացինք, վոր մենք ել մարդ ենք, և այսոր միայն հասկացանք թե ինչ ե Խորհրդային իշխանությունը»:

1921 թ. մարտի 8-ին Հայաստանի աշխատավորուհին ու գեղջկուհին նույնպես տոնում են միջազգային բանվորուհիների տոնը: Յերևանում և գավառներում այդ որը կազմակերպում են միախնայներ, դասախոսություններ: հայ և թուրք գեղջկուհիները արտասուներով հիշում են կոտորածի ու սարսափի սև սրբերը և վողջուհու իրենց ազատարար Խորհրդային իշխանության: Այդ որը Յերևանի բանվորուհիներն ու աշխատավորուհիները իրենց աշխատավորձի մի մասը տալիս են սովյալների սգտին: Գավառական գործկոմները չբավոր կանանց բաժանում են ալլուր, հաց սնտախկ և սապուն:

Հետագա տարիներում յերբ արդեն կին-բաժինները կազմակերպված ու ամրացած են լինում, մարտի 8-ի տոնը կազմակերպվում ե ավելի ճշտ:

Հայաստանի աշխատավորուհին և գեղջկուհին մարտի 8-ի միջազգային իր այս տոնին՝ իրենից վերջնականապես թափ պիտի տա խավարն ու սոցիալությունը ու պետք ե հանդիսանա սոցիալական կյանքի նոր կառուցողը: «Առանց կանացի մասսաների մասնակցության մենք չենք կարող հասնել սոցիալիզմին» սովորեցրել ե մեզ ընկ. Լենինը, վորի հուշածանն այսոր, Հայաստանի աշխատավորուհի, նոր կյանքի ճանապարհ ե բաց անում:

Հայաստանի բանվորուհիներ ու գեղջկուհիներ, պլուխները բարձր պահեք, նայեցեք ձեր շուրջը. մեր շաբերում դեռ շատ ունենք անգրագետ ու նախապաշարյաձ կանայր, սղնեցեք նրանց, մասնակցեցեք խրճ/թ. ընթերցարաների, անկյունների ու դպրոցների բացման:

ԿԵՑՑԵՆ ԲԱՆՎՈՐՈՒԿԻԶԻՆԵՐՆ ՈՒ ԳԵՂՋԿՈՒԶԻՆԵ-  
ՐԸ, ՎՈՐՈՆՔ ՄԱՐՏԻ 8-Ի ՏՈՆԻՆ ԳՆՈՒՄ ԵՆ  
Յ-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ:

ԲԱՆՎՈՐՈՒԿԻԶԻՆԵՐ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒԶԻՆԵՐ, ԼԵՆԻ-  
ՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐԶ ԵՆ  
ԲԱՑԵԼ ՁԵՁ ՀԱՄԱՐ:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՈՒԿԻԶԻՆԵՐ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒ-  
ԶԻՆԵՐ, ՄԱՐՏԻ 8-ԻՆ ԱՄՐԱՑՐԵՔ ՔԱՂԱՔԻ ՅԵՎ  
ԳՅՈՒՂԻ ԿԱՊԸ. ՁԵՐ ԿԱՊԸ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎ-  
ՎՐԴԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ Ե՛:

ՄԻԱՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ-ԲԱՆՎՈ-  
ՐԱ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՌՅԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ-  
ՆՈՋԸ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐ ԴԱՐՁՐԵՑ ՏՂԱՄԱՐ-  
ԴՈՒՆ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ 7 ՏԱՐՎԱ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՎԱՐ ՃՈՐՏՈՒԶՈՒՆ ԱՅՍՈՐ ԴԱՐ-  
ՁՐԵԼ Ե ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ:

ԱՐԵՎԵԼՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԻՆ, ՎՈՏՔԻ ԿԱՆԳՆԻՐ  
ՔՈ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ԻՐԱՎԱ-  
ԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

ԱՐԵՎԵԼՔԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՎՈՏՔԻ  
ՅԵԼԻՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ, ԱՆԳԼԻԱՅԻ, ԱՄԵՐԻԿԱՅԻ,  
ՅԱՊՈՆԻԱՅԻ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ:

ԹՈՂ ԿՈՐՁԵՆ ԱՅՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՍՈՎՈ-  
ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՎՈՐՈՆՔ ՃՈՐՏԱՑՆՈՒՄ ԵՆ  
ԱՐԵՎԵԼՔԻ ԿՆՈՋԸ:



9177 6 5 409.

<< Ազգային գրադարան



NL0236186

